ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ Մելիքյան Սոֆյա

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....6

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ .....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....28

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, սովորողների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ: Մի կողմ թողնելով կրթության կազմակերպման տարբեր եղանակները՝ այս աշխատանքում ներկայացվում են հայոց և լեզվի հայ գրականության դասերի ուսուցման առանձնահատկությունները՝ միջառարկայական կապեր ստեղծելիս և այդ գործընթացի ազդեցությունը սովորողների աշխարհայացքի ձևավորման վրա:

Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գթասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին և այլն: Ուստի մենք կանգ կառնենք հայոց լեզու և հայ գրականություն առարկաների դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի ազդեցության վրա և ուսումնասիրության օբյեկտ կդիտարկենք սովորողներին:

Թեմայի արդիականությունը՝ Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ուսուցիչների համագործակցության արդյունավետությունը առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը

2. բացահայտել հայոց լեզվի, հայ գրականության և այլ առարկաների միջև միջառարկայական կապերի ստեղծման արդյունավետ ուղիներն ու միջոցները

3. ուսումնասիրել սովորողների աշխարհայացքի ձևավորման գործընթացում հայոց լեզվի , հայ գրականության և այլ առարկաների համատեղ դասավանդման պրոցեսը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական դպրոցի Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում են ուսումնական առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Այս հարցին անդրադարձել են բոլոր ժամանակաշրջանների մեծ մանկավարժները: Օրինակ՝ Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկայի սկզբունքների դասակարգման մեջ առանձնացնում էր համակարգվածության և հաջորդականության սկզբունքը, որի տակ հասկանում էր դպրոցական առարկաների միջև փոխադարձ կապերի ստեղծումը: Ընդ որում՝ այնպիսի կապերի, որոնց միջոցով այդ առարկաները նպաստեն մեկը մյուսի ըմբռնմանն ու յուրացմանը: Մեծ մանկավարժը նկատում է, որ ոչ ոքի հնարավոր չէ կրթություն տալ մի որևէ մասնակի գիտության միջոցով՝ անկախ մնացած գիտություններից[1] :

Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամբողջդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Զէ° որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»[2]:

Նյութն ավելի մատչելի կդառնա, եթե ստեղծենք միջառարկայական կապ և աշակերտներին ինքնուրույն գործելու հնարավորություն տանք: Ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը՝ ըստ «Հանրակրթության պետական չափորոշչի»[3]: Չափորոշիչը վերընթերցելուց հետո կարող ենք վստահորեն ասել, որ միջառարկայական կապերի իրագործումն ապահովում է հանրակրթության առջև դրված բազմաթիվ խնդիրների լուծման, աշխարհի միասնական ընկալման, պրոբլեմների լուծման ընդհանրական մոտեցման հարցը, ինչպես նաև աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հարցը:

---

[1]Վ. Խ. Հարությունյան, Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970, 293 էջ,

[2] Նույն տեղում, էջ 301,

[3] Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011, էջ 21,

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրել է նաև ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշների: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյական դաստիարակության դերը՝ գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց՝ Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի՝ ապահովելով միջառարակայական կապը[1] :

[1] Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001, 231 с.

## ԳԼՈՒԽ 1

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ և ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ են դնում ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի առջև:

Այդ պահանջներին համապատասխան՝ ուսուցման/դասավանդման մեթոդների փոփոխություններն անխուսափելիորեն առաջադրում են բազմաթիվ պահանջներ նաև ուսուցիչների պարտականությունների նկատմամբ:

Հանրակրթության պետական կրթակարգում նշվում է, որ գիտելիքներից զատ կարևոր է նաև սովորողի հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորումը, աշխարհայացքի ընդլայնումը: Այդ խնդիրը լուծելու համար ուսուցիչը պետք է՝

1. ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ,
2. գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում մասնակցության կարևորությունը.
3. հրաժարվի ժամանակավրեպ գործելակերպից.
4. կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները.
5. մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսուցիչը ստեղծագործող, արարող անձնավորություն է, որը միշտ շարժման, որոնումների, մասնագիտական զարգացման մեջ է: Նրա համար կարևոր է անընդհատ ինքնակատարելագործման և մասնագիտական աճի անհրաժեշտության գիտակցումը:

Կրթակարգում առանձնապես ընդգծվում է ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագրերի անհրաժեշտությունը, որի իրականացման արդյունքում ուսուցիչը պետք է ունենա.

1) իր աշխատանքը ծրագրելու կարողություն, այդ թվում՝

ա) առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու

բ) ուսումնական գործընթացն արդյունավետ պլանավորելու

գ) արդյունավետ ուսուցման համար ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու:

2) ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողություն, այդ թվում՝

ա) անհատականացված ուսուցում իրականացնելու

բ)սովորողի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսային առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժառիթներն ու վարքագիծը հաշվի առնելու

գ) կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդնելու

դ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ–հոգեբանական միջավայր ստեղծելու:

3) Գնահատման կարողություն. այդ թվում՝

ա) սովորողի առաջադիմության գնահատումը՝ դիտարկելով գնահատումը որպես սովորողի շարունակական զարգացումն ապահովող միջոց:

4) Անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու կարողություն, այդ թվում ՝

ա) ուսուցման և դաստիարակության գործընթացին մշտական անդրադարձ կատարելու, սեփական աշխատանքի արդյունքները շարունակաբար գնահատելու, սեփական պլանները վերանայելու:

5) մասնագիտական զարգացման կարողություն.այդ թվում՝

ա) ինքնուրույն և գործընկերների հետ մասնագիտական նպատակային հետազոտություններ կատարելու, ամփոփելու և եզրակացություններ ներկայացնելու,

բ) սեփական մասնագիտական զարգացումը պլանավորելու և իրականացնելու:

Ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային, բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը և այլն:

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

- որոշում կայացնող
- ուսուցմանն աջակցող (ֆասիլիտատոր)
- ուսուցման գործընթացին հետևող

- ուսուցման ընթացքը գնահատող
- անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

- Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:
- Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:
- Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:
- Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է ՝

- ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ.
- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության գիտակցումը.
- գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է.
- ունենա անձնական պատասխանատվության զգացում.
- ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին.
- ունենա հաղորդակցման հմտություն.
- ցուցաբերի համագործակցային մոտեցում.
- ունենա ղեկավարման հմտություններ.
- տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:

## ԳԼՈՒԽ 2

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Համագործակցային ուսուցման գաղափարաբանությունը մանրակրկիտ մշակվել է ամերիկյան մանկավարժների երեք խմբի կողմից (Ջ. Հոփկինսի համալսարան՝ Ռ. Սլավին, Մինեսոտայի համալսարան՝ Ջոնսոն եղբայրներ, Կալիֆոռնիայի համալսարան՝ Ջ. Արոնսոն):

Այսօր արդեն ամբողջ աշխարհում համագործակցային ուսուցումը դիտարկվում է որպես ավանդական մեթոդներով ուսուցման գործընթացի լավագույն այլընտրանք: Համագործակցային ուսուցման նպատակները չեն սահմանափակվում միայն գիտելիքների ձեռքբերմամբ, այստեղ առաջնային են նաև սոցիալական հմտությունների, փոխհաղորդակցական կարողությունների ձևավորման լայն հնարավորությունները և իհարկե աշխարհայացքի ընդլայնումը: Միայն համագործակցային ուսուցման դեպքում են երեխաները լայն հնարավորություն ունենում միասին աշխատելու, սովորելու, ստեղծագործելու, իրար օգնելու, զարգանալու:

Համագործակցային ուսուցման հիմնական գաղափարը միասին սովորելն է, այլ ոչ թե ինչ-որ մի բան միասին կատարելը: Պետք է միշտ նկատի առնել այն հանգամանքը, որ աշակերտներին մի սենյակում հաստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային:

Փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը: Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

1. անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
2. հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
3. սթրեսի հաղթահարումը.
4. շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

Համագործակցային ուսուցման հիմնական մեթոդներից են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն: Անդրադառնանք մեր կիրառած մեթոդներին և ներկայացնենք , թե ինչպիսի կապ կարելի է ստեղծել հայոց լեզվի, հայ գրականության և այլ առարկաների միջև:

Խճանկար

Խճանկար (Jigsaw)համագործակցային ուսուցման հիմնական մեթոդներից մեկն է, որի կիրառման ընթացքում սովորողներն աշխատում են համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ, սակայն առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով, նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:

Այս մեթոդով դասի վառ օրինակ է 11__րդ դասարանում «Ավ. Իսահակյանի կյանքն ու գործը»թեմայի ուսուցումը: Կիրառեցինք նաև "շրջված դասարան" մեթոդը: Միջառարկայական կապը հիմնականում աշխարհագրություն առարկայի հետ էր: Էքսկուրս կատարվեց բոլոր այն երկրներում ու քաղաքներում, որտեղ դեգերել էր Վարպետը: Աշխարհագրական քարտեզի վրա ցուցադրվեցին բնակավայրերը, խոսվեց դրանց մասին, էկրանի վրա ցուցադրվեցին դրվագներ այդ բնակավայրերից: Ուշագրավն այն է , որ սովորողներն այդ գործին վերաբերվեցին ամենայն պատասխանատվությամբ:Կապ ապահովվեց նաև երգ__երաժշտություն առարկայի հետ (երգեցինք «Բինգյոլ» երգը):

Մեթոդի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում, կրկնում են իմացածն այլ առարկաներից կամ ձեռք են բերում նոր գիտելիքներ, որոնք նպաստում են աշխարհընկալմանը և աշխարհայացքի ձևավորմանը:

Մեթոդի նպատակները

1. Նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն՝ անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին
2. նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ, տարբեր առարկաներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռել
3. օգնել ընկերների հետ համագործակցելով գտնել առաջադրված հարցերի պատասխանները գիտության տարբեր բնագավառներում

4. սովորեցնել տեղեկատվությունը մշակել և հաղորդել պատասխանատվությամբ՝ որպես որոշակի թեմայի կամ նյութի այս կամ այն հատվածի փորձագետ

5. հնարավորություն ստեղծել դառնալու միաժամանակ և՝ սովորող, և՝ սովորեցնող, նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

Գոյություն ունեն մեթոդի զանազան տարբերակներ: Այստեղ ներկայացնում ենք դրանցից երկուսը:

Խճանկար – 1

Ընթացքը

1. Անհրաժեշտ է պարզել տրված թեմայի հետ առնչվող կարևոր ոլորտները կամ թեման բաժանել առանձին ամբողջական մասերի, հատվածների: Կարևոր է հաշվի առնել առաջադրանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրել տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:

2. Հաջորդ քայլը համագործակցային խմբեր ձևավորելն է: Նպատակային խմբեր ձևավորելիս լավ կլինի, հնարավորության դեպքում, հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները:

3. Համագործակցային խմբերում մասնակիցներին համարներ են տրվում՝ 1, 2, 3, 4:

4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերում՝ 1, 1, 1 ; 2. 2, 2 և այլն: Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տրվում է առանձին առաջադրանք, օրինակ, եթե նյութը հատվածների ենք բաժանել, փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն: Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում սովորողներն իրենք կարող են մշակել իրենց խմբի աշխատանքային պլանը: Իսկ սա իր հերթին պայմանավորված է նրանով, թե 'Խճանկար' մեթոդը դասի ընթացքում կամ ուսուցման մեջ ինչ տևողությամբ է կիրառվում:

«Խճանկար»-ին դիմել եմ Հովհաննես Թումանյանի «Գելը»պատմվածքն ուսուցանելիս: Միջառարկայական կապ ստեղծեցինք կենսաբանություն առարկայի հետ, երբ կարդում ու նշում էինք գայլի սովորությունների մասին, գազանի արյան կառուցվածքի մասին: Քանի որ մեր բնակավայրը լեռներով է շրջապատված ու անտառոտ է, կարևորվում է բնությանը մոտ լինելը, նրա գաղտնիքներին հասու լինելը:

- Առաջադրանքը կատարելիս աշակերտները կարող են բնագրից տարբեր հատվածներ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմություններ կամ նույն հեղինակի այլ պատմվածքները կարդալ. Կարդացել են Շունը, Մայրը » պատմվածքները՝ ավելի արտահայտիչ դարձնելու կենսաբանության և հոգեբանության հետ կապը:

- Առանձին հետազոտությունների ոլորտ կարող են դառնալ ժամանակակից մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ:
- Աշակերտները կարող են այս մեթոդը կիրառել նաև ինքնուրույն՝ անկախ բնագիտական հետազոտական նախագծեր իրականացնելու համար: Այս դեպքում յուրաքանչյուր խումբ կամ առանձին մասնակից պատասխանատվություն է կրում կոնկրետ ոլորտի ուսումնասիրման համար:

5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբերը և հաշվետվություն են տալիս խմբին իրենց «փորձագիտական»խմբի ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում.

- ներկայացվում են խմբային քննարկումներ, աշխատանքների արդյունքները
- աշակերտներն իրենց սովորածը սովորեցնում են միմյանց
- միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

Ամփոփիչ փուլը ամբողջացավ, երբ համագործակցային խմբերն ամբողջ դասարանին ներկայացրին թեման՝ իրենց նախընտրած ձևով 2-3 րոպեի ընթացքում: Թեմայի ամփոփման ժամանակ տրվեցին հանձնարարություններ՝

Ո՞րն էր ամենակարևորը, Համառոտ ձևակերպեք թեմայի գլխավոր գաղափարը

Ինչի՞ վրա խումբն ամենաշատը ուշադրություն դարձրեց:

Այս քայլը հնարավորություն տվեց միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից՝ ելնելով տարբեր առարկաներից ստացած գիտելիքներից:

Խճանկար- 2

Խճանկար-2-ը արդեն ներկայացված «Խճանկար»մեթոդի մասնավոր՝ նպատակաուղղված, հարմարեցված տարատեսակն է:

12__րդ դասարանում

«Գեղարվեստական ոճ» թեման ուսումնասիրելիս դիմում ենք այս մեթոդին՝ կատարելով Հայոց լեզու-12 դասագրքի էջ 49 __ի 9__րդ վարժությունը ( Պահանջը՝ Կարդալ Հովհ. Թումանյանի «Շունը»պատմվածքից բերված հատվածը, մեկնաբանել գիտական և գրական ոճերին բնորոշ իրողությունները):

Ընթացքը

1. Աշակերտներն աշխատում են չորսհոգանոց թիմերով (համագործակցային խմբերով): Խմբի անդամներին տրվում են տարբեր

«փորձագիտական թերթիկներ », որոնցում զետեղված հարցերը նպատակ ունեն ուղղորդել տվյալ աշակերտի աշխատանքի գործընթացը: Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերակվելու են աշակերտների պարտականությունները. նրանք օգնելու են հիմնական խմբին՝ համակողմանի յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:

2. Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար: Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց

«փորձագիտական թերթիկում» նշված հարցերին և համապատասխան գրառումներ անեն:

3. Աշակերտները վերախմբավորվում են՝ ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ: Ուսուցիչն այդ ընթացքում շրջում է խմբերում՝ հանդես գալով որպես մասնակից, անհրաժեշտության դեպքում պարզաբանումներ անում:

4. Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորեցնում փորձագիտական խմբում յուրացրածը: Փորձագետները ոչ միայն զեկուցում են, այլ նաև պատասխանում հարցերին և հավաստիանում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:

5. Վերջին քայլը գնահատումն է: Ուսուցիչը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե ինչ ներդրում են իրենք ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում: Այս աշխատանքը կատարելիս կապ ենք « հաստատում » կենսաբանության հետ:

Մենք կիրառել ենք այս մեթոդը նաև 10-րդ դասարանում : Գրականության դասին , երբ մենք անցնում էինք «Հայ գրերի գյուտը» թեման, ստեղծեցինք միջառարկայական կապեր:

4 թիմերից յուրաքանչյուրն իր անելիքն ուներ. առաջին թիմը պետք է ստեղծել կապ գրականության և պատմության միջև, երկրորդ թիմը՝ գրականության և աշխարհագրության միջև, երրորդը՝ գրականության նյութը կապեր լեզվի նյութին, իսկ չորրորդը՝ ստեղծել կապ գրականության և Հայոց եկեղեցու պատմության միջև:

Մշակելով առաջադրանքների համալիր՝ մենք կարողացանք հիանալիորեն ստեղծել միջառարկայական կապեր, ինչը հաճելի էր նաև աշակերտներին, և նրանք մեծ ոգևորությամբ էին մասնակցում դասին և ավելի ընդլայնում աշխարհայացքը, իսկ դրան նպաստում էր նաև նրանց սերտ համագործակցությունը:

Շրջագայություն պատկերասրահում: Այս մեթոդը 'Խճանկար'-ի տարատեսակներից մեկն է: Արդյունավետ է կիրառել ծավալուն նյութերի ուսուցման ընթացքում:

Մեթոդը հաջողությամբ կարելի է կիրառել ինչպես գրականության այնպես էլ հայոց լեզվի ուսուցման ընթացքում:

Օրինակ՝ 12__րդ դասարանում

«Գեղարվեստական ոճ» թեմայի ամփոփման ժամանակ դասի իմաստի ընկալման և կշռադատման փուլերում կարելի է կիրառել հենց այս մեթոդը:

Դասարանը բաժանվում է երեք խմբի, դրանք փորձագիտական խմբերն են: Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է աշխատել և կազմել ցուցապաստառներ՝ կատարելով էջ 50__ի վարժություն 11__ը(պահանջը՝ Նշված թեմաներից որևէ մեկով գրել փոքրիկ շարադրանքներ՝ գործառական տարբեր ոճերով՝ «Անտառ»,«Վթար»,«Սևանա լիճ»: Խմբերից մեկը միջառարկայական կապ է ստեղծում աշխարհագրություն, մի մասը՝ բնագիտություն առարկաների հետ, « խոսում »պատկերների լեզվով՝ կապ ստեղծելով նաև նկարչության հետ: Երբ բոլոր ցուցապաստառները պատրաստ են, դրանք փակցվում են դասարանի պատերին այնպես, որ իրարից բավականին հեռու լինեն, որպեսզի խմբային աշխատանքի ժամանակ խմբերն իրար չխանգարեն: Սովորողները խմբի ներսում հաշվում են մինչև երեքը, հնարավոր է, որ յուրաքանչյուր համարից խմբում լինի երկուական սովորող: Մեկ համարները հավաքվում են առաջին խմբում, երկուսները՝ երկրորդ, երեքները՝ երրորդ: Ձևավորված խմբերը մայր խմբերն են: Առաջին խումբը մոտենում է, իր ցուցապաստառին, ներկայացնում աշխատանքը, հետո՝երկրորդը: Մայր խմբի մեջ կան սովորողներ, որոնք մասնակցել են տվյալ ցուցապաստառի ստեղծման աշխատանքներին և իրենց դասընկերներին բացատրում, սովորեցնում են իրենց կատարած աշխատանքը, փոխանցում իրենց ստացած գիտելիքը: Աշխատելիս խմբերը կարող են օգտվել նաև համացանցից: Այդ ցուցապաստառի ուսումնասիրությունից հետո, խմբերը փոխում են իրենց տեղերը՝ անցնելով հաջորդ ցուցապաստառի ուսումնասիրությանը, այդ դեպքում սկսում են սովորեցնել այն աշակերտները, որոնք մասնակցել են տվյալ ցուցապաստառի ձևավորմանը և այսպես շարունակվում է այնքան ժամանակ, մինչև բոլոր աշակերտները ուսումնասիրում են բոլոր երեք ցուցապաստառները:

Այս մեթոդը սովորողների մեջ ձևավորում է համագործակցելու, գիտելիքները պատկերավոր ներկայացնելու, ընկերներից լսելով և տեսնելով սովորելու, իր իմացածը ընկերներին սովորեցնելու կարողություններ , հմտություններ և, իհարկե, միջառարակայական կապերի միջոցով թեման ավելի լավ յուրացնելու:

Խմբային հետազոտության մեթոդ

Այս մեթոդի կիրառման ընթացքում սովորողները խմբով աշխատում են որևէ թեմայի շուրջ: Մեթոդի հիմքում ընկած է սովորողների փոխօգնության և համագործակցության գաղափարը: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ այս դեպքում նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Նպատակները

սովորողները՝

- խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը
- սովորում են համակարգված և խորությամբ հետազոտել կոնկրետ խնդիրներ
- ամրապնդում են վերլուծական կարողությունները,
- սովորում են համագործակցել:

Այսպիսով՝ սովորողները յուրացնում են բովանդակությունը՝ զարգացնելով հետազոտական և համագործակցային աշխատանքի կարողությունները:

Ընթացքը

**1.** Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը

Ուսուցիչը կարող է ընտրել թեմաները, ապա, ըստ սովորողների ընտրության՝ ձևավորել խմբեր: Կարելի է նաև սկզբում ձևավորել խմբերը, ապա սովորողներին հնարավորություն տալ ընտրելու հետազոտության թեման:

**2.** Խմբային աշխատանքի պլանավորումը

Այս փուլում սովորողները որոշում են իրենց համատեղ աշխատանքի բովանդակային ընդգրկումը, մշակում են գործողությունների պլան, որոշում են խմբի անդամների պարտականությունները, նախանշում են այն աղբյուրները, որոնք նպաստելու են հետազոտությանը:

**3.** Հետազոտության իրականացումը

Սա խմբային հետազոտության ամենաերկար փուլն է: Այս փուլում սովորողները փնտրում են աղբյուրներ, նյութեր, տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչն անընդհատ պետք է պարզի, թե ինչ են անում սովորողները, ինչ աջակցության կարիք ունեն:

**4.** Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում

Այս փուլում ուսուցիչը պետք է ակտիվ աջակցություն ցուցաբերի: Հնարավոր է, որ սովորողները շեղվեն հետազոտության թեմայից, նրանց պետք է ուղղորդել: Կարելի է խորհուրդ տալ հետազոտության կառուցվածքի վերաբերյալ, օրինակ, աղյուսակներ, գրաֆիկներ օգտագործելու, հետազոտությունը ավելի պատկերավոր դարձնելու վերաբերյալ:

**5.** Հետազոտության արդյունքների ներկայացում

Այս փուլը երկու հիմնական նպատակ ունի: Սովորողները պետք է լուսաբանեն իրենց կողմից կատարված հետազոտությունը և հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնեն այն: Կատարված հետազոտությունը կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, ցուցապաստառներով, համակարգչի միջոցով, պրոյեկտորի, էլեկտրոնային գրատախտակի և այլ միջոցներով: Նախընտրելի է, երբ հնարավորինս շատ միջոցներ են օգտագործվում:

Խմբային հետազոտության գնահատումը

Խմբային հետազոտության արդյունքում գնահատվում են՝ բովանդակությունը, հետազոտական կարողությունները, խմբային աշխատանքի (համագործակցային) հմտությունները:

Բովանդակության յուրացման գնահատումը

Այս մեթոդի կիրառման կարևոր խնդիրներից է հետազոտվող նյութի բովանդակության յուրացումը: Ուսուցչի համար կարևոր է պարզել, թե սովորողները ինչ չափով են յուրացրել իրենց հետազոտած նյութը: Այդ նպատակով ուսուցիչը կարող է առանձին հարցեր ուղղել սովորողներին, կազմել հարցաթերթիկ և պահանջել լրացնել այն, ապա գնահատել, կարելի է հանձնարարել գրել շարադրություն և այլն:

Խմբի հետազոտական աշխատանքի գնահատում

Խմբի հետազոտական աշխատանքի գնահատման սանդղակ

| | Կարիք ունի բարելավման | Բավարար | Լավ | Շատ լավ | Գերազանց |
|---|---|---|---|---|---|
| Հստակ դրված խնդիր | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Հստակ ձևակերպված հիպոթեզներ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Արդյունավետ հավաքագրված տվյալներ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Տվյալների հստակ վերլուծություն 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| Կրամաբանական եզրահանգումներ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Աշխատանքի հետազոտական որակը | 1 | 2 | 3 | 4 | 5 |

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատումը

Խմբային հետազոտության ընթացքում կարևոր է սովորողների համագործակցային կարողությունների գնահատումը:

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատման սանդղակ

| Հազվադեպ | Միջտ | | | | |
|---|---|---|---|---|---|
| Խմբի անդամները լսում էին միմյանց | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Խմբի անդամները փոխանցում էին իրենց ձեռքբերած տեղեկատվությունը, քննարկում գաղափարները 1 2 3 4 5 | | | | | |
| Խմբի անդամները օգնում էին միմյանց՝ հասկանալու նյութը | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Խմբի անդամները կատարում էին խթանող հարցադրումներ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Խմբի անդամները պարբերաբար կիրառում էին հետադարձ կապ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | | |

**11**-րդ դասարանում կրկնելով նախորդ տարվա անցածը՝ կարողացանք հիանալիորեն կապ ստեղծել հայոց լեզվի և այլ առարկաների միջև: Տարեսկզբին կրկնում ենք Ձևաբանություն բաժինը և տասը խոսքի մասերից նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը ներկայացնում աղյուսակով: Դասարանը բաժանեցինք երեք խմբերի.

**1**-ին խումբ՝ գոյական, ածական,

**2**-րդ խումբ՝ թվական, դերանուն,

**3**-րդ խումբ՝ բայ , մակբայ:

Դիում ենք այլ առարկաների օգնությանը՝ մասնավորապես ինֆորմատիկայի: Սահիկաշարի միջոցով նրանք պետք է ներկայացնեին կատարած աշխատանքը. հայոց պատմության, աշխարհագրության,

կենսաբանության, քիմիայի, հասարակագիտության նախորդ տարվա դասագրքերից դուրս բերելով համապատասխան օրինակները ցույց տալ դրանց կիրառումը խոսքում:
Մեթոդը շատ արդյունավետ էր սովորողների աշխարհայացքի ընդլայման, տարբեր առարկաներից դասի նյութը ևս մեկ անգամ սերտելու, ինքնուրույն և խմբերով աշխատելու համար:
Այս պահին պատրաստ է ն ներկայացման «Խաչատուր Աբովյան»և«Կոմիտաս»հետազոտական աշխատանքները, որոնք **11**__ րդ
և **12**__րդ դասարանների աշակերտները կներկայացնեն առաջիկա շաբաթվա ընթացքում:
Միջառարկայական կապեր են ստեղծվել պատմություն,հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն,
երգ __երաժշտություն, թատերական արվեստ առարկաների հետ:

Բանավեճի մեթոդներ
Բանավեճ

Ուսումնական բանավեճը (դիսկուսիա լատիներեն՝ disscussio-հետազոտություն, քննարկում) մտքերի, դրույթների, կարծիքների նպատակաուղղված և որոշակիորեն կարգավորված փոխանակություն է՝ հանուն ճշմարտության որոնման, ընդ որում բոլոր սովորողները այդ փոխանակության կազմակերպման մասնակիցներն են: Բանավեճի նպատակը ոչ այնքան սովորողների՝ միմյանց տրված հարցերի ու դրանց պատասխանների պարզ հերթագայությունն է, որքան խնդրո առարկա հիմնահարցի բուռն քննարկումն ու կազմակերպական ջանքերը, պայմանով, որ մասնակիցների կողմից պահպանվում են քննարկման անցկացման կանոնները:
Բանավեճը, ի տարբերություն զրույցի, բովանդակային առումով սովորաբար սահմանափակվում է մեկ առանձին թեմայով կամ հիմնահարցով և կառուցվում է որոշակիորեն սահմանված կարգով: Քանի որ այստեղ խիստ կարևորվում է յուրաքանչյուրի առանձին կարծիքն ու հայացքները և հարգալից վերաբերմունքը մյուսների կարծիքների նկատմամբ, բանավեճի ընթացքում բացառվում է խոսողին ընդհատելը: Թեպետ շատ դեպքերում բանավեճը կարող է զգացմունքային բնույթ ստանալ, այն երբեք արդյունքում վեճի չպետք է վերածվի: Այլ կերպ ասած, բանավեճը չպետք է վիճաբանություն դառնա: Բանավեճը կարող է բնականոն ընթացք ունենալ այն դեպքում միայն, եթե բոլոր մասնակիցները ձգտում են հասնել առաջադրված ընդհանուր նպատակին:

- Ուսումնական բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է:
- Բանավեճն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության զարգացմանը:
- Չիջելով զրույցի մեթոդին տեղեկատվության հաղորդման արդյունավետու-թյան առումով, բանավեճը բարձր արդյունավետություն է հանդես բերում տեղեկատվության ամրապնդման, ուսումնասիրվող նյութի ստեղծագործա-կան ընկալման և արժեքային կողմնորոշման ձևավորման առումով:

Բանավեճի ընթացքը, սկիզբը
Բանավեճի անցկացման ընթացքում մի շարք դժվարություններ կարող են առաջանալ: Դրանց մի մասը հաճախ կապվում է բանավեճի սկզբի հետ: Ուսուցիչը պետք է հոգ տանի, որպեսզի աշակերտները հստակ պատկերացում ունենան բանավեճի առարկայի, ընդհանուր շրջանակների. ինչպես նաև դրա անցկացման կարգի վերաբերյալ: Բանավեճ կազմակերպելիս պետք է ուշադրություն դարձնել բարենպաստ

հոգեբանական մթնոլորտ ձևավորելու վրա: Այսպես, սովորողների դասավորությունը պետք է այնպես կազմակերպել (օրինակ՝ շրջանաձև), որպեսզի յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսների դեմքը:
Բովանդակային առումով կարևոր է թեմայի, հիմնահարցի նախնական բացատրությունը: Ներածական մասը սովորաբար կազմակերպվում է այնպես, որպեսզի ակտիվացվեն սովորողների գիտելիքները, տրվեն անհրաժեշտ տեղեկատվություն–ներ խնդրո առարկա հարցի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար:
Ներածական մասը ցանկացած բանավեճի անցկացման կարևոր և անհրաժեշտ մասն է: Այն կազմակերպելու տարբեր եղանակներ կարող են լինել: Դրանցից է, օրինակ, հարցի համառոտ քննարկումը փոքր (չորսից–վեց աշակերտից կազմված) համագործակցային խմբերում: Կարելի է նաև նախապես մեկ կամ մի քանի աշակերտի հանձնարարել դասարանի առաջ հանդես գալ հիմնահարցը ներկայացնող հաղորդումով: Երբեմն ուսուցիչը կարող է համառոտ նախնական հարցում անցկացնել:
Ընդհանուր առմամբ կարելի է թվարկել բանավեճը սկսելու մի շարք տար–բերակներ.
- հիմնահարցի ներկայացում,
- տեսաֆիլմի կամ կինոֆիլմի ցուցադրում,
- ուսումնական նյութի (առարկայի, պատկերային նյութի և այլն) ցուցադրում,
- փորձագետի հրավիրում (իբրև փորձագետ կարող են հանդես գալ խնդրին լավատեղյակ մարդիկ),
- նոր տեղեկությունների հաղորդում,
- ձայնագրությունների ունկնդրում,
- բեմականացում, որևէ դրվագի դերային ներկայացում,
- խթանող հարցեր, ինչպիսիք են՝ ի՞նչ, 'ինչպե՞ս', 'ինչո՞ւ' և այլն:
Բանավեճի բուն ընթացքը
Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչից զգալի վարպետություն է պահանջվում, որպեսզի նրա մասնակցությունը կարգադրիչ դիտողությունների կամ սեփական տեսակետների արտահայտման բնույթ չստանա: Բովանդակային առումով ուսուցչի ունեցած հիմնական գործիքն այստեղ հարցերն են: Հարցերի ճիշտ կիրառում և ընթացիկ քննարկման առանցքային կողմերի գրանցում գրատախտակին – ահա առաջին հայացքից ոչ բարդ հնարները, որոնք սովորաբար կիրառում է փորձառու ուսուցիչն այս դեպքում: Կարևոր է, սակայն, հարցերի բնույթը: Երբեմն հարցը, որ տրվել է քննարկումը խթանելու համար, կարող է նաև հակառակ արդյունքն ունենալ: Այդ պատճառով փորձառու ուսուցիչներն այդ դեպքում նախընտրում են չմիջամտել, դադար տալ՝ աշակերտներին մտածելու հնարավորություն տալու համար: Ելակետային ոչ ճիշտ հասկացությունները կամ փաստական տեղեկությունները կարիք չկա խորացնել նոր հարցադրումներով: Այդ դեպքում ավելի արդյունավետ է ուսուցչի բացատրող, տեղեկացնող, բայց և միաժամանակ՝ հակիրճ խոսքը: Հաճախ կիրառվող միջոցներից է նաև աշակերտի խոսքի, մանավանդ եթե այն հստակորեն չի ձևակերպված, համառոտ վերաշարադրանքը: Ոչ ճիշտ արտահայտություններին կամ պնդումներին պետք է անպայման անդրադառ–նալ, պահպանելով մանկավարժական տակտը:
Եվս մեկ, նախընտրելի մեթոդական միջոց է սկսած միտքը շարունակելու առա–ջարկը, մանավանդ եթե այն ձևակերպվում է անուղղակիորեն ('ինձ թվում է, հարցի քննարկումը կարելի է շարունակել նաև հետևյալ ուղղությամբ..., դա ճիշտ է իհարկե, բայց կարելի է դիտել նաև այս առումով...:): Այդ դեպքում ոչ միայն ելույթ ունեցողն է ձգտում ավելի ամբողջական ու բազմակողմանի ներկայացնել իր տեսակետը, այլև ավելի է մեծանում լսարանի հետաքրքրությունը քննարկվող հարցի նկատմամբ, քան ուսուցչի ուղղակի հարցերին սովորողների կողմից տրվող պատասխանների դեպքում: Ուսումնական բանավեճն ընդհանրապես

պետք է անցկացվի բարյացակամության և յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ ուշադրության մթնոլորտում:

Բանավեճի ամփոփումը

Բանավեճի ընթացքում և տվյալ ուսումնական պարապմունքի ավարտին ուսուցիչը սովորաբար որևէ կերպ ամփոփում է բանավեճի արդյունքները: Այդ ամփոփումը կարող է հետևյալ ձևակերպումն ունենալ.

- հիմնական թեմայի վերաբերյալ ասվածի ամփոփում,
- ներկայացված տվյալների, փաստական տեղեկությունների վերաբերյալ ընդհանուր ակնարկ,
- բանավեճի ընթացիկ քննարկում,
- մինչ այդ արված եզրակացությունների վերաձևակերպում, վերաշարադրանք,
- հանրագումար, ակնարկ այն ամենի մասին, ինչն արդեն քննարկվել է,
- հարցեր, որոնք հետագա քննարկման կարիք ունեն:

Ինչպես ընթացիկ, այնպես էլ եզրափակիչ ամփոփումը պետք է լինի հակիրճ, բովանդակալից և հնարավորինս ամբողջականորեն արտահայտի ներկայացված բոլոր տեսակետները: Միաժամանակ, այն պետք է ելակետային լինի հաջորդ թեմայի ուսումնասիրության համար:

Մեթոդի առավելությունները

Ընկալման աստիճանի բացահայտումը

Բանավեճը ցույց է տալիս, թե խումբը ինչ չափով է հասկացել քննարկվող հարցերը: Այն լրացուցիչ, առավել կանոնակարգված մեթոդների կիրառման պահանջ չի առաջադրում:

Գիտելիքների ակտիվ փոխանցում

Եթե դասախոսությունը խմբի հետ աշխատանքի ավելի խնայողական եղանակ է, ապա բանավեճը ավելի կայուն արդյունք ապահովող միջոց է: Մասնավորապես դա ճիշտ է այն դեպքում, երբ քննարկման բովանդակությունը հակադիր է մասնակիցներից գոնե մի քանիսի դիրքորոշումներին, կամ վիճելի հարցերի տեղիք է տալիս

Ակտիվ փոխազդեցություն

Բանավեճը խմբի ներգրավվածության բարձր մակարդակ է ենթադրում: Հնարավոր է, որ սովորողների մի մասը սկզբում չցանկանա միանալ քննարկմանը, բայց եթե թեման և հարցերը լավ են մտածված, դժվար է անհաղորդ մնալ և ի վերջո չներգրավվել բանավեճին:

Մեթոդի սահմանափակումները

Թեմայից շեղվելու հավանականություն

Բանավեճի, որպես մեթոդի, կիրառման վտանգներից մեկը թեմայից հեստու-թյամբ շեղվելու մեծ հավանականությունն է: Խմբի ուշադրությունը անհրաժեշտ հունի մեջ պահելուն կարող է օժանդակել հենց սկզբում բանավեճի առարկայի, թեմայի և կանոնների հիշեցումը:

Մեծ կախվածությունը խմբից

Բանավեճի որակը զգալիորեն կախված է մասնակիցների պատրաստվածու-թյան մակարդակից: Այդ հանգամանքը պետք է նկատի ունենալ բանավեճին մաս-նակից խումբ ընտրելիս:

Ոչ ճիշտ դիրքորոշման հանգելու հավանականություն

Բանավեճն անկասկած երևույթներին նոր հայացքով նայելու հրաշալի հնարավորություն է տալիս, քանի որ երևույթները քննարկվում տարբեր կողմերից և ի հայտ են գալիս միջառարկայական կապեր: Չնայած դրան, հնարավոր է, որ խմբի մասնակիցների մի մասը քննարկման արդյունքում ավելի ամրապնդի իր հայացքները:

Գնահատվող բանավեճ

Սովորաբար բանավոր պատասխանի դեպքում աշակերտը դասարանին պատմում է այն ամենը, ինչ գիտե տվյալ թեմայի վերաբերյալ: Գնահատվող բանա-վեճը նման է խճանկարի, որի յուրաքանչյուր մասնիկը ամբողջի անբաժանելի մասն է: Ոչ մի աշակերտ չի կարող գերիշխել բանավեճում, քանի որ ցանկացած ելույթի համար ժամանակը խիստ սահմանափակ է (5-15 վայրկյան) և միայն խմբի անդամների բոլոր կարծիքները միասին կարող են քննարկվող թեմայի հստակ պատկերը կազմել:

Գնահատվող բանավեճը կարելի է համեմատել 'ընկերական հանդիպման' հետ: Այդպիսի հանդիպումներում կարծիքների և տեղեկությունների փոխանակումը շատ անկեղծ է, մասնակիցները ձգտում են բանավեճին ներգրավել բոլորին՝ ինքնաբուխ կերպով հայտնելով իրենց կարծիքն ու ունեցած տեղեկությունը:

Դպրոցում դասի ժամանակ ուսուցիչը հաճախ գերիշխող դիրք ունի: Գնահատվող բանավեճի դեպքում, աշակերտներին հնարավորություն է տրվում զրուցել ընկերների հետ, լսել, թե նրանք ինչ են մտածում:

Լինելով ավանդական գրավոր ստուգման այլընտրանքը՝ գնահատվող բանավեճը հնարավորություն է տալիս զարգացնելու աշակերտների ստեղծագործական կարողությունները՝ ազատելով ուսուցչին գրավորների մի ամբողջ կույտ ստուգելու հոգսից: Գնահատվող բանավեճը չի փոխարինում գրավոր աշխատանքի կամ բանավոր ստուգման գնահատմանը, այլ օգնում է ուսուցչին սովորողներին գնահա-տել կարևոր հմտությունների համար, իսկ աշակերտին հնարավորություն է տալիս դրսևորելու իր գիտելիքները:

Ընթացքը

Բանավեճի 6-8 մասնակիցներ շրջանաձև նստում են դասարանի կենտրոնում, իսկ մյուսները ուսուցչի հետ միասին տեղավորվում են նրանց շուրջը և լսում: Ուսուցիչը միավորներ է տալիս մասնակիցներից յուրաքանչյուրին՝ բանավեճում ունեցած ներդրման համար: Բանավեճը տևում է 8-20 րոպե՝ կախված թեմայից և սովորողների տարիքից: Թեմայից չշեղվելու համար բանավեճի մասնակիցներն առաջնորդվում են նախապես կազմված պլանով:

Գնահատվող բանավեճի հիմնական կանոնը

Բանավեճի ընթացքում վարքագծի ցանկացած դրսևորում արժանանում է խրախուսական կամ տուգանային միավորների, որոնք գրանցվում են գնահատման թերթիկում (տես՝ թեմայի վերջում):

Ուսուցիչը խրախուսական միավորներ է տալիս՝

քննարկվող հիմնահարցի նկատմամբ որոշակի դիրքորոշում ունենալու, այլ խոսքով՝ աշակերտի 'կողմնորոշման' համար

փաստերի վրա հիմնված կամ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության տրամադրման համար

թեմային հավատարիմ մնալու (թեմայից չշեղվելու) համար

մեկ ուրիշ աշակերտի՝ բանավեճի մեջ ներգրավելու համար:

Վերջին կետը ապահովում է մասնակիցների ակտիվությունը և կանխում բանավեճում աշակերտների մի մասի մենաշնորհային դիրքը:

Աշակերտները կարող են խրախուսական միավորներ ստանալ նաև ճշգրտող հարցերի և բանավեճը առաջ տանելու համար: Լսելու կարողության զարգացմանը նպաստում է միավորներ ստանալը քաղաքավարի վերաբերմունքի և ուշադրության համար այն դեպքում, երբ ինչ-որ մեկի պատասխանը հեռու է նախապես սահմանված թեմայից կամ էական չէ բանավեճի համար: Խրախուսական միավորներ կարելի է

տալ նաև համեմատություն անցկացնելու համար, ինչը վկայում է մտածողության բարձր մակարդակի մասին և նպաստում բանավեճի զարգացմանը:
Տուգանային միավորներ կարելի է տալ՝

- ընդհատելու
- բանավեճի անցկացմանը խոչընդոտելու
- մենաշնորհային դիրքի ձգտելու
- անձի դեմ ուղղված (անձնական բնույթի) ելույթի,
- ոչ էական դիտողություններ անելու համար:

Գնահատվող բանավեճը երեխաներին մեծ բավականություն է պատճառում, հատկապես երբ աշակերտները ներողություն են խնդրում որևէ մեկի խոսքն ընդհատելու համար: Աշակերտը միավորներ չի կորցնում այն դեպքում, երբ բաղաբավարությամբ նահանջում է (դուրս է գալիս քննարկումից): Լուրջ թերություն է համարվում բանավեճը մենաշնորհելու ձգտումը, քանի որ մյուսները զրկվում են քննարկմանը մասնակցելու և հետևաբար՝ միավորներ վաստակելու հնարավորությունից: Ոչ էական դիտողությունները տուգանային միավորների են արժանանում անկախ այն բանից, թե մասնակիցներից որևէ մեկը մատնանշել է դա, թե ոչ: Իբրև ոչ էական դիտողություն են որակավորվում բանավեճի ընթացքում արդեն օգտագործ-ված տեղեկատվության կրկնումը և թեմային չառնչվող դիտարկումները:

Տուգանային միավորների օգնությամբ ուսուցիչը կարող է կարգուկանոն պահպանել և սրել բանավեճին ներկա աշակերտների ուշադրությունը: Ուսուցիչը հաղորդում է նրանց, որ բանավեճի սկզբից սկսած նրանք կարող են տուգանային միավորներ ստանալ առանց լրացուցիչ զգուշացման: Այդ միավորները հանվում են տվյալ աշակերտի ստացած միավորների ընդհանուր գումարից: Բանավեճի ավարտից հետո ուսուցիչը հաշվում է աշակերտների ստացած միավորները: Բանավեճի մեթոդով մեր անցկացրած դասերից են Ակ. Բակունցի «Միրհավ» __ը՝ բարոյագիտություն, շրջակա միջավայր, Մուրացանի «Գևորգ Մարզպետունի»պատմվեպը՝ պատմություն, աշխարհագրություն, միջմշակութային կապեր,ընտանեկան բարոյագիտություն, Ռաֆֆիի «Սամվել» պատմվեպը՝ պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, արվեստ, Նար __Դոսի «Սպանված աղավնին» վիպակը՝ գեղագիտություն, բնություն, բարոյագիտություն:

Ինչպես հաղթահարել գնահատման դժվարությունները

Միավորներ դնելը բանավեճի ընթացքում մի մարդու համար առաջին հայացքից կարող է դժվարին գործ թվալ, բայց իրականում այն բավականին հեշտ է:

Աշակերտներին բանավիճային խմբերում բաժանելուց հետո պետք է նախապատրաստել նրանց համար գնահատման թերթիկներ:

Վարքագծի ցանկացած տեսակի համար Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակներում պետք է գրել խմբի անդամների անունները: Ամեն անգամ, երբ աշակերտները որոշակի բնույթի վարքագիծ են դրսևորում, պետք է նրանց անվան դիմաց նշան դնել:

Հավանաբար գնահատվող բանավեճին հատուկ է սուբյեկտիվիզմը, բայց այն ավելին չէ, քան գրավոր աշխատանքների գնահատման դեպքում: Գնահատվող բանավեճը կիրառած ուսուցիչները հաստատում են, որ միավորներ տալը սովորաբար արդարացի է լինում: Ընդ որում, նրանք արագորեն գիտակցում են, որ համապատասխան քանակի միավորներ դնելու համար հաճախ բավարար է լինում նաև պատասխանի սկիզբը: Այսպես, երբ լսում էր՝ Կարծում եմ, որ..., Իմ կարծիքով, դա..., Եթե դա ինձանից կախված լիներ..., դա արդեն պարզորոշ վկա-յում է, որ աշակերտը որոշակի վերաբերմունք ունի հիմնահարցի

նկատմամբ: Փաստերի վրա հիմնված տեղեկատվության օրինակներ են (արժանանում է 2 միավորի) անունները, փաստական այլ տվյալները՝ վերցված դասագրքից կամ տեղեկատվական այլ աղբյուրներից:

Բանավեճում ունեցած ցանկացած ներդրման համար աշակերտը միավորներ է ստանում միայն մի կատեգորիայի գնահատման թերթիկում. նույնիսկ եթե անգիր արտասանում է 3 փաստ միաժամանակ, ստանում է միայն 2 միավոր: Բացառություն է կազմում միայն լրացուցիչ խրախուսանքը (1 միավոր) մեկ ուրիշին բանավեճի մեջ ներգրավելու համար:

Քանի որ ուսուցիչը չպետք է ընդհատի բանավեճի ընթացքը, ցանկալի է, որ նա քննարկման ընթացքում իր համար որոշ նշումներ անի և բացատրություն տա բանավեճի ավարտից հետո: Այսպես, կարող են լինել փաստերի սխալ ներկայացում, որոշակի հասկացություններ, որոնք պետք է առանձնացնել և պնդումներ, որոնք պետք է քննարկել ամբողջ դասարանով: Բանավեճի ավարտից հետո ուսուցիչը պետք է ամփոփի ինչպես բանավեճի ընթացքը, այնպես էլ այնտեղ հնչած փաստերն ու ներկայացված գաղափարները:

Բանավեճի ավարտից հետո աշակերտները պետք է իմանան, թե քանի միավոր են ստացել: Նրանցից յուրաքանչյուրը կարող է իր համար գնահատման առանձին ամփոփաթերթ ստանալ: Դրա համար պետք է նախապատրաստել հա-մապատասխան թվով թերթիկներ, որտեղ նշվում են ոչ միայն յուրաքանչյուրի ստացած միավորները, այլև ընդհանուր դիտողություններն ու, անհրաժեշտության դեպքում, համապատասխան գնահատման բացատրությունները:

Թերթիկներ լրացնելը ավելի քիչ ժամանակ է պահանջում, քան տվյալ թեմայով գրավոր աշխատանք ստուգելը: Պետք է աշակերտներին նախապես զգուշացնել, որ նրանք կրկնության հնարավորություն չունեն, և ուսուցչի նշանակած միավորները պետք է ընդունել որպես վերջնական արդյունք:

Ուսուցչից բացի, գնահատման գործընթացին կարող են մասնակից դառնալ նաև աշակերտները: Այս դեպքում պետք է լրացուցիչ ջանքեր գործադրել՝ գնահատման անաչառությունն ապահովելու համար:

Բանավեճի պլանը

Պլանը գնահատվող բանավեճի հիմնական տարրերից է: Այն օգնում է աշակերտներին տեղեկատվության որոնման, նշումների կարգավորման և բուն բանավեճի անցկացման մեջ: Վերջինս, ի դեպ, հիշողության վարժանքի բնույթ չպետք է կրի, և պետք է աշակերտներին թույլատրվի (անգամ՝ խրախուսվի) նշումներից օգտվել: Բացի այդ, փոքր խմբի յուրաքանչյուր մասնակից պետք է պատրաստ լինի քննարկելու պլանի ցանկացած կետ: Այլ խոսքով, չի կարելի նախապես բաշխել դերերը և դրանով իսկ բանավեճը վերածել անհատական ելույթների շարքի:

Պլանը որոշում է ցանկացած տեղեկատվության կազմակերպման եղանակը, դրանով իսկ այն դարձնելով բանավեճին առավելագույնս հարմար: Աշակերտների կողմից նյութի դասդասման այս եղանակը շատ նման է որևէ թեմայի գրավոր ուսումնասիրության: Նյութի այսպիսի կազմակերպումը ոչ միայն սովորողներին ման-բամասն ծանոթացնում է ինֆորմացիային, այլ օգնում է հիշել այն նաև դրանից հետո:

Առավել նպատակահարմար է, որպեսզի բանավեճի պլանը կազմի ուսուցիչը, քանի որ նա ավելի լավ գիտի տվյալ թեմայի ուսումնական նպատակները, և նրա կողմից կազմված պլանը սովորողներին կմղի դեպի այդ նպատակները:

Պլանի ամենակարևոր գործառույթն է՝ օգնել աշակերտներին շչեղվել բանավեճի թեմայից: Խումբը, որ հավատարիմ է մնում պլանին, սովորաբար բա-նավեճն անցկացնում է բարձր մակարդակով՝ պահպանելով սահմանված ժամա-քանակը: Վերջապես, ոչ բոլոր բանավեճերն են մանրակրկիտ պլան պահանջում: Կան թեմաներ, որոնք կարող են շատ պարզ, մատչելի պլան ունենալ՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ,

ո՞րտեղ, ինչո՞ւ, ինչպիսի՞ն է քո կարծիքը: Գնահատվող բանավեճի տևողությունը կապված է պլանի կառուցվածքի հետ և կարող է տարբերվել՝ կախված աշա-կերտների տարիքից և քննարկվող թեմայից: Ասենք, կարելի է անցկացնել 17-20 րոպե տևողությամբ բանավեճ 6-8 հոգուց կազմված խմբերով, աշակերտների տարիքը՝ սկսած 12 տարեկանից:

Գնահատվող բանավեճի նախապատրաստումը

Գնահատման թերթիկ

| Ա | Բ Գ Դ Ե |
|---|---|
| +2 | Քննարկվող հարցի մասին որոշակի դիրքորոշումը |
| +1 | Էական, տեղին միտք, կապ որևէ ուսումնական առարկայի հետ, դիտարկում, դիտողություն |
| +2 | Ապացույցներ, որոնք հաստատում են միտքը կամ փաստացի տվյալների մեջբերումը |
| +1 | Քննարկման մեջ մեկ ուրիշի ներգրավումը |
| +1 | Հարց՝ միտքը ճշգրտելու կամ քննարկումը շարունակելու նպատակով |
| +2 | Համանմանություններ գտնելը, զուգահեռներ անցկացնելը |
| +2 | Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մտքերի բացահայտում |
| +2 | Ոչ տեղին դիտողությունների բացահայտումը |
| -2 | Խոսողին ընդհատելը |
| -1 | Ոչ տեղին դիտողությունը |
| -3 | Քննարկման մենաշնորհումը |
| -3 | Անձնական վիրավորանք |
| | Ընդհանուր միավորները |
| | |

Գրավոր շրջանաձև բանավեճ

Այս մեթոդը նպաստում է սովորողների համագործակցային կարողությունների ձևավորմանը: Այն բանավեճի մեթոդի գրավոր տարատեսակն է: Մի կողմից ապահովում է բոլոր սովորողների ակտիվությունն ու միմյանց միջև ակտիվ փոխներգործությունը, մյուս կողմից էլ ապահովում է բանավեճի անցկացման յուրահատուկ՝ 'խիստ բարեկիրթ, անաղմուկ՝ միջավայր: Գրավոր շրջանաձև բանավեճը նպաստում է նաև գրավոր խոսքի զարգացմանը:

Նախևառաջ անհրաժեշտ է լսարանը բաժանել 4 խմբի՝ ստեղծելով ասենք, կարմիրների, կապույտների, կանաչների և դեղինների խմբեր: Խմբերի թիվը պետք է համապատասխանի այն գաղափարների, պնդումների թվին, որոնց շուրջ պետք է կազմակերպվի բանավեճը:

Ներածություն. Սովորողներին տեղեկացնել, որ նրանք անդրադառնալու են հասարակությանը խիստ հուզող կամ կարդացած ստեղծագործությունից մի քանի հրատապ և լուրջ հարցերի, ձևակերպելու են իրենց տեսակետները վերջիններիս վերաբերյալ, գործնականում կիրառելով շատ հետաքրքիր մեթոդ, որը կոչվում է 'Գրավոր շրջանաձև բանավեճ՝ :

Սովորողների խմբերին բաժանել մեկական մեծ թղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա, ամեն խմբի գույնին համապատասխան գույնով, մեծ տառերով գրված են մեկական գաղափար, պնդում կամ նախադասություն:

Խմբերին տալ իրենց ընտրած գույնին համապատասխան մեկական մատիտ:

Խմբերին առաջարկել կարդալ իրենց նյութերը, քննարկել այն և իրենց վերաբերմունքը գրավոր շարադրել հարցի տակ: Պետք է հետևել, որ օգտագործվի թղթի 1|4 մասը: Մյուսներին էլ գրելու տեղ պետք է թողնել:

Ժամանակը լրանալուց հետո՝ խմբերին հրահանգել դադարեցնել քննարկումները և ժամացույցի սլաքի ուղղությամբ միմյանց փոխանցել իրենց թղթերը (առաջին պտույտ):

Յուրաքանչյուր պտույտի հետ պետք է ավելացնել աշխատանքի համար տրվող ժամանակը:

Խմբերից յուրաքանչյուրին առաջարկել ծանոթանալ նոր պնդման հետ, կարդալ նախորդ խմբի գրած դիտարկումը և պատասխանել ու վերաբերմունք ձևակերպել ոչ թե պնդման, այլ նախորդ խմբի ձևակերպման վերաբերյալ:

Ժամանակը լրանալուց հետո խմբերին հրահանգել դադարեցնել քննարկումները և ժամացույցի սլաքի ուղղությամբ նորից փոխանցել իրենց թղթերը (երկրորդ պտույտ) :

Խմբերից յուրաքանչյուրին առաջարկել ծանոթանալ նոր պնդման հետ, կարդալ նախորդ խմբերի գրած դիտարկումները (թվով 2) և պատասխանել ու վերաբերմունք ձևակերպել ոչ թե պնդման, այլ նախորդ խմբերի ձևակերպումների վերաբերյալ:

Ժամանակը լրանալուց հետո խմբերին առաջարկել ժամացույցի սլաքի ուղղությամբ կրկին միմյանց փոխանցել թղթերը (երրորդ պտույտ):

Խմբերին առաջարկել կարդալ (նոր թղթի) հիմնական պնդումը, ծանոթանալ պնդման վերաբերյալ նախորդ խմբերի (3 խումբ, 3տեսակետ) գրավոր շարադրած մոտեցումների հետ և ձևակերպել ու գրել սեփական մոտեցումը:

Ժամանակը լրանալուց հետո խմբերը չորրորդ անգամ են միմյանց փոխանցում թղթերը, որից հետո աշխատանքները վերադառնում են հիմնական խմբերին:

Խմբերը կարդում են պնդման վերաբերյալ նախորդ խմբերի գրավոր շարադրած մտքերն ու մոտեցումները, քննարկում և ձևակերպում իրենց խմբի վերջնական տեսակետը:

Աշխատանքների ներկայացում: Խմբերը ներկայացնում են իրենց վերջնական տարբերակները՝ անդրադառնալով նաև մյուս խմբերի տեսակետներին: Շեշտադրվում է նաև, թե հատկապես ինչն է փոփոխվել իրենց մոտեցման մեջ և հատկապես որ խմբի տեսակետի ազդեցությամբ: Խմբերի կարծիքները արտացոլվում են տարբեր գույներով:

Այնուհետև կազմակերպվում է քննարկում ձևավորված տեսակետների շուրջ՝ հարց ու պատասխանի ձևով:

Մեթոդը կիրառել ենք 11-րդ դասարանում ՝ կապ ստեղծելով հայ գրականության դասանյութի և հայոց պատմության միջև՝ ավելի կոնկրետ՝ Վասակի կերպարը գրական ստեղծագործություններում և հայոց պատմության էջերում (Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք»պատմավեպի ուսումնասիրման շրջանակներում): Նյութը հիանալի յուրացրին և բացահայտեցին, որ տարբեր գրողներ տարբեր վերաբերմունք են ունեցել Վասակի նկատմամբ, հետևաբար տարբեր կերպով են կերտել նրա գրական կերպարը, և հիարկե համեմատեցին գրական և իրական կերպարը՝ պաշտպանելով կամ դեմ գնալով Վասակին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ստորև ներկայացնում եմ օրվա դասի պլան՝ կարևորելով միջառարկայական կապի դերն ու նշանակությունը սովորողի աշխարհայացքի, աշխարհընկալման ձևավորման գործընթացում:

## ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Սոֆյա Մելիքյան

ԴԱՍԱՐԱՆ՝ 11Գ

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ «Զաքուղոն» նորավեպը

ԴԱՍԱՏԻՊԸ՝ հաղորդման դաս

ՆՊԱՏԱԿԸ՝ 1. Միջառարկայական կապեր ստեղծելով՝ նպաստել սովորողների ինքնուրույն մտածողության զարգացմանը

2. Ուսուցանել, որ սովորողը գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունը, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ:

1.ԽԹԱՆՄԱՆ ՓՈԻԼ /7բոպե, 2,5 մ./ Ամփոփել «Երջանիկ մահը»նորավեպը՝ մտագրոհի միջոցով ստուգելով յուրացումը: Գնահատել

«երջանիկ մահ» արտահայտությունը, արժևորել երևույթը:

2. ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈԻԼ/20բ, 4մ/

Գործածում ենք «Խճանկար » մեթոդը: Ուսուցչի հրահանգով սովորողները կազմում են 3 խումբ: Նպատակս է ստեղծել միջառարկայական կապ հասարակագիտության (բարոյագիտություն, իրավունք), աշխարհագրության հետ:

● Առաջին խմբում գրականագետներն են

● Երկրորդ խմբում՝ բարոյագետները

● Երրորդ խմբում՝ իրավագետները:

1_ին խումբը ներկայացնում է Զաբուղոնին՝ որպես գրական հերոս

2_րդ խումբը՝ զայրացած, չարացած մարդ Զաբուղոնին

3_րդ խումբը՝ գողություն անող մարդ Զաբուղոնին:

Կիրառում ենք նաև

«պատկերասրահ » մեթոդը: Ցուցապաստառների վրա նկարչության լեզվով ներկայացվում է հերոսը՝ ըստ գրականության, բարոյագիտության և իրավագիտության:

Տ_ածև աղյուսակի միջոցով բնութագրում ենք հերոսներին:

Վերջում կապ ենք հաստատում նաև աշխարհագրության հետ:

3. ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈԻԼ /15բ, 3,5մ./

Բնագրից դուրս ենք գրում բնութագրող տողեր, կատարում ենք բառային աշխատանք. գրականության տետրերում դուրս ենք գրում արևմտահայերեն բառեր ու արտահայտություններ և գտնում դրանց արևելահայերեն համարժեքները:

Կատարում ենք եզրահանգում՝ գործածելով «քառաբաժանի» մեթոդը:

Տրվում է հայտորոշիչ թեստ

ա) Կի՞րթ մարդիկ էին հերոսները: Ո՞րն է կիրթ մարդու առավելությունը:

բ) Ինչպե՞ս ես գնահատում Վասիլիկի արարքը:

գ) Ո՞վ էր իրական գողը:

ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ /3բոպե/:

Պատմել «Զաբուղոն» նորավեպի դիպաշարը, բնութագրել հերոսներին:

♡Այս դասի վերջնարդյունքը նկատելի կդառնա միայն տարիներ հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**1**. Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

2. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի աշխարհայացքի ձևավորման գործընթացում:

3. Դասի նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկը ճիշտ մեթոդների ընտրությունն է:

4. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը,աշխարհայացքի ընդլայնումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

5. Միջառարկայական կապերի ստեղծումը , կոլեգաների հետ համագործակցումը նպաստում են նյութի յուրացմանը և ստեղծում են մնայուն և կայուն գիտելիքներ:

6. Հարկավոր է հաշվի առնել նաև, որ դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի ստեղծումը շատ հաճախ ստացվում է դիպվածաբար. աշակերտի որևէ արտահայտություն կամ միտք կարող են այդ պահին թելադրել միջառարկայական կապ բժշկության, մաթեմատիկայի, տնտեսագիտության, իրավաբանության և այլ գիտությունների հետ, նույնիսկ հովվության, ձիապանության, եզնարածության կամ հյուսնության ու բրուտագործության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005

Հարությունյան Վ. Խ., Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970,

Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011,

Տոդանյան Ն., Թ.Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2012,

Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001,